



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. առաջին եռամսյակում /վերլուծություն/

2004թ. առաջին եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 21512 գործարքներ, որոնց քանակը 2003թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 66.2%-ով, իսկ չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 4.0%-ով:

2004թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 9164 օտարման գործարքների 92.1%-ը կազմել են առուվաճառքները, 7.4%-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 41.3%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 43.7%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. առաջին եռամսյակում, 2003թ. առաջին եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 47.0%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 6.6%-ով: 2004թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 3384 առուվաճառքի գործարքների 66.5%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2003թ. առաջին եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 38.4%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 13.7 %-ով:

2004թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2004թ. 1-ին եռամսյակում համարժեք է 565.3 դրամի /

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. առաջին եռամսյակում /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		2003թ. առաջին եռամսյակ	2004թ. առաջին եռամսյակ	2003թ. չորրորդ եռամսյակ
Կենտրոն	250.0-970.0	356.0	428.5	408.7
Արաբկիր	200.0-560.0	247.0	330.8	306.3
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	141.4	203.8	194.1
Նոր-Նորք	115.0-250.0	122.5	166.7	152.1
Ավան	120.0-190.0	112.3	159.2	152.2
Էրեբունի	120.0-300.0	127.4	169.9	163.5
Շենգավիթ	120.0-250.0	124.7	178.2	163.3
Դավթաշեն	130.0-260.0	137.0	203.0	195.2
Աջափնյակ	120.0-250.0	121.7	181.1	172.2
Մալաթիա-Սեբաստիա	120.0-250.0	122.4	176.5	159.4
Նուբարաշեն	65.0-100.0	55.5	71.9	70.5
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>65.0-970.0</b>	<b>151.6</b>	<b>206.3</b>	<b>194.3</b>

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. առաջին եռամսյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները 2003թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 36.1%, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 6.2%-ով:

2004թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2004թ. առաջին եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1357 բնակարաններ, որոնց քանակը 2003թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 37.3 %-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 1.3%-ով:

2004թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. առաջին եռամսյակում /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			2003թ. առաջին եռամսյակ	2004թ. առաջին եռամսյակ	2003թ. չորրորդ եռամսյակ
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	61.1	63.1	62.8
	Ապարան	18.0-40.0	26.8	27.9	27.4
	Թալին	18.0-40.0	23.5	25.8	25.2
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	52.6	55.1	54.8
	Մասիս	20.0-90.0	53.5	54.9	54.4
	Վեդի	20.0-45.0	30.0	32.4	31.7
Արարատ	Արարատ	22.0-50.0	30.6	32.1	31.6
	Վաղարշապատ	35.0-102.0	76.5	85.3	84.7
	Արմավիր	21.0-58.0	42.7	46.1	45.7
Գեղարքունիք	Մեծամոր	17.0-50.0	30.4	30.9	30.9
	Սևան	20.0-50.0	30.2	31.0	30.7
	Գավառ	20.0-50.0	29.5	30.8	30.5
Լոռի	Մարտունի	18.0-38.0	28.2	29.8	29.7
	Վարդենիս	10.0-21.0	16.8	17.3	17.3
	Վանաձոր	30.0-90.0	59.5	62.1	61.7
Լոռի	Ստեփանավան	20.0-48.0	30.8	33.4	33.4
	Սյիտակ	17.0-40.0	22.5	25.7	24.1
	Ալավերդի	15.0-40.0	24.7	25.7	25.6
Կոտայք	Տաշիր	15.0-28.0	18.5	19.9	19.4
	Արովյան	40.0-110.0	77.2	84.5	84.2
	Նոր Հաճն	35.0-75.0	49.9	53.2	52.3
Կոտայք	Բյուրեղավան	15.0-45.0	34.5	35.5	35.2
	Եղվարդ	28.0-55.0	39.4	41.4	40.7
	Հրազդան	18.0-55.0	29.4	32.2	31.0
Շիրակ	Ծաղկաձոր	22.0-95.0	73.7	75.8	75.8
	Չարենցավան	13.0-55.0	30.0	32.1	31.1
	Գյումրի	30.0-100.0	63.3	72.1	71.9
Շիրակ	Արթիկ	17.0-45.0	24.5	25.9	25.3
	Մարայիկ	15.0-33.0	22.8	24.2	23.7
	Գորիս	21.0-45.0	28.3	30.2	29.7
Սյունիք	Կապան	18.0-52.0	27.5	30.0	29.4
	Միսիան	17.0-37.0	26.9	28.4	27.6
	Մեղրի	18.0-58.0	23.5	25.2	25.2
Վայոց Ձոր	Քաջարան	13.0-30.0	17.4	18.5	18.5
	Վայք	15.0-48.0	33.8	35.4	35.3
	Եղեգնաձոր	20.0-58.0	45.7	47.0	46.9

	Ջերմուկ	18.0-50.0	39.4	41.2	41.2
Տավուշ	Դիլիջան	15.0-54.0	35.2	36.2	36.2
	Իջևան	23.0-60.0	39.7	40.9	40.4
	Բերդ	15.0-43.0	28.0	29.3	29.3
	Նոյեմբերյան	15.0-45.0	28.0	26.8	26.8

2004թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների եռամսյակային աճը կազմել է 1.0 %, իսկ տարեկան աճը՝ 6.0% :

2004թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1445 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 296, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1149: 2003թ. առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 59.3%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 27.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 70.5%-ով: 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 2.7%-ով, ընդ որում Երևանում՝ 17.5%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 2.0%-ով: 2004թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում գրանցված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2004թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. առաջին եռամսյակում /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		2003թ. առաջին եռամսյակ	2004թ. առաջին եռամսյակ	2003թ. չորրորդ եռամսյակ
Կենտրոն	255.0-990.0	358.3	443.1	422.9
Արաբկիր	205.0-580.0	249.7	331.9	310.8
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	143.3	205.9	196.4
Նորք-Մարաշ	120.0-340.0	279.7	320.8	311.8
Ավան	125.0-200.0	114.0	160.8	151.5
Էրեբունի	130.0-320.0	129.0	171.2	162.2
Շենգավիթ	120.0-260.0	126.3	179.3	164.1
Դավթաշեն	140.0-260.0	138.3	203.1	194.3
Աջափնյակ	125.0-230.0	123.0	181.9	170.2
Մալաթիա-Սեբաստիա	125.0-230.0	124.3	177.6	159.0
Նուբարաշեն	65.0-110.0	56.3	74.0	73.4
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	<b>65.0-990.0</b>	<b>167.5</b>	<b>222.7</b>	<b>210.6</b>

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2004թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում անհատական բնակելի

տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները 2003թ առաջին եռամսյակի համեմատ աճել են 33.0%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 5.7%-ով:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. առաջին եռամսյակում /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			2003թ. առաջին եռամսյակ	2004թ. առաջին եռամսյակ	2003թ. չորրորդ եռամսյակ
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	80.8	83.2	82.9
	Ապարան	20.0-55.0	37.3	38.9	38.8
	Թալին	15.0-40.0	27.2	28.1	28.1
Արարատ	Արտաշատ	28.0-85.0	60.6	61.9	61.9
	Մասիս	27.0-88.0	60.7	62.7	62.4
	Վեդի	25.0-60.0	35.3	36.3	36.3
	Արարատ	25.0-60.0	35.4	37.6	37.5
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	78.6	90.0	89.7
	Արմավիր	35.0-90.0	50.0	52.5	52.3
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	35.7	36.4	36.4
	Գավառ	25.0-65.0	38.8	39.9	39.9
	Մարտունի	20.0-55.0	33.0	33.9	33.9
	Վարդենիս	15.0-45.0	20.1	21.3	21.3
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	66.1	69.2	68.9
	Ստեփանավան	20.0-50.0	31.9	33.7	33.7
	Սյիտակ	17.0-50.0	23.9	26.1	24.1
	Ալավերդի	18.0-50.0	25.7	26.0	25.9
	Տաշիր	15.0-30.0	19.1	20.3	19.9
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	90.0	92.8	92.5
	Նոր Հաճն	35.0-80.0	53.1	54.5	54.2
	Բյուրեղավան	15.0-50.0	36.9	38.2	38.2
	Եղվարդ	23.0-70.0	45.9	47.4	47.3
	Հրազդան	25.0-65.0	38.7	40.3	40.1
	Ծաղկաձոր	45.0-110.0	83.7	85.5	85.2
	Չարենցավան	25.0-50.0	33.1	33.6	33.4
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	87.0	91.2	90.9
	Արթիկ	18.0-55.0	26.9	28.7	28.7
	Մարայիկ	15.0-45.0	23.3	24.3	23.9
Սյունիք	Գորիս	22.0-65.0	30.6	31.7	31.7
	Կապան	25.0-55.0	29.5	31.2	31.1
	Միսիան	18.0-50.0	27.3	29.2	28.7
	Մեղրի	15.0-30.0	28.1	28.2	28.2
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	35.5	37.0	37.0
	Եղեգնաձոր	20.0-65.0	47.9	49.3	49.3
	Զերմուկ	25.0-60.0	41.9	43.4	43.4
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	38.3	39.2	39.2

	Իջևան	30.0-70.0	40.0	41.5	41.2
	Բերդ	20.0-50.0	30.0	30.9	30.9
	Նոյեմբերյան	20.0-50.0	30.6	30.8	30.8

2004թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների եռամսյակային աճը կազմել է 0.4%, իսկ տարեկան աճը՝ 4.1%:

Ընդհանուր առմամբ, 2004թ. առաջին եռամսյակում հանրապետությունում օտարվել են 1271.08 հա /այդ թվում 135.86 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 1025.87 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 1253.79 հա հողերի /այդ թվում 132.74 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 1015.79 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Օտարված 15.29 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ /այդ թվում 1.12 հա Երևանում/, որից 10.08 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Օտարված 2.00 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակման գործարքներ /փոխանակման բոլոր գործարքները իրականացվել են Երևան քաղաքում բնակավայրերի հողերի նկատմամբ/: Հողերի առուվաճառքների առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 323.87 հա, որից 309.31 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2004թ. առաջին եռամսյակում մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/		հասարակական կառուցապատ.				բնակելի կառուցապատ. /տնամերձ/		հասարակական կառուցապատ.	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	50	4.08	84	77.64	0	0.00	146	12.20	25	11.00
Արագածոտն	6	48.30	1	0.08	3	0.75	84	57.37	62	11.09	3	1.59
Արարատ	70	159.62	155	17.65	4	3.82	265	112.12	129	11.51	0	0.00
Արմավիր	2	200.00	14	0.70	3	0.34	152	109.31	55	5.77	4	1.42
Գեղարքունիք	0	0.00	16	1.88	0	0.00	14	7.21	15	1.60	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	71	54.03	20	2.47	3	0.86
Կոտայք	32	80.29	31	2.96	3	3.23	313	98.0	147	16.63	5	2.74
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	68	70.36	18	1.18	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	7	9.57	1	0.12	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	30	3.75	7	1.62	22	5.95	2	0.20	1	0.45
Տավուշ	1	1.20	0	0.00	2	0.02	7	2.47	3	0.18	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>111</b>	<b>489.41</b>	<b>297</b>	<b>31.10</b>	<b>106</b>	<b>87.42</b>	<b>1003</b>	<b>526.39</b>	<b>598</b>	<b>62.95</b>	<b>41</b>	<b>18.06</b>

2004թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հողերի 2179 առուվաճառքի գործարքներ, որից 1114-ը՝ գյուղատնտեսական նշանակության, 1044-ը՝ բնակավայրերի, 21-ը՝ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ:

2004թ. առաջին եռամսյակում հողերի առուվաճառքներից 391-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 18-ը՝ Երևանում /2.65 հա/, իսկ 373-ը՝ մյուս մարզերում /516.27 հա/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 109 միավորը հանդիսացել է գյուղատնտեսական նշանակության /479.72 հա/, 259-ը՝ /27.54 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ /, 21-ը՝ հասարակական կառուցապատման հողեր /8.45 հա/ և 2-ը արդյունաբերական օբյեկտների հողեր /3.21 հա/:

2004թ. առաջին եռամսյակում հանրապետությունում վաճառված 21 միավոր արդյունաբերական օբյեկտների հողերից 6-ը գրանցվել է Արմավիրի մարզում /6.33 հա /, 2-ը՝ Կոտայքի մարզում /4.33 հա / և 13-ը / 27.43 հա / Երևանում:

2004թ. առաջին եռամսյակում, հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքի 1114 գործարքներ, այդ թվում 109-ը՝ աճուրդով, 9-ը՝ դատարանի վճռով և 2-ը՝ ուղղակի վաճառքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի առուվաճառքների				
	Ֆանավր	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Ֆանավր	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	6	48.30	180.0	630.0	265.0	50	20.55	840.0	10000.0	2620.0
Ապարան						3	1.20	130.0	1150.0	355.0
Թալին						27	28.60	200.0	1680.0	395.0
Ծաղկահովիտ						4	7.02	170.0	2100.0	270.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	63	120.02	37.0	5560.0	1040.0	130	45.34	740.0	10000.0	2060.0
Մասիս	4	8.83	1180.0	1295.0	1238.0	40	15.26	400.0	8500.0	1140.0
Վեդի	2	22.30	54.0	2390.0	1220.0	92	50.82	450.0	7200.0	1310.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						47	33.06	650.0	4650.0	1320.0
Բաղրամյան	2	200.0	204.0	204.0	204.0	28	37.52	130.0	1200.0	480.0
Վաղարշապատ						72	33.33	980.0	14000.0	2330.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						1	0.50	420.0	1100.0	655.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի						1	0.37	100.0	4000.0	685.0
Սևան						5	0.30	100.0	1000.0	385.0
Վարդենիս						7	6.04	60.0	1180.0	260.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						24	24.82	360.0	5500.0	880.0
Գուգարք						6	1.20	500.0	6000.0	1515.0
Սպիտակ						5	1.60	500.0	3300.0	1015.0
Ստեփանավան						26	14.39	180.0	4000.0	430.0
Տաշիր						9	11.48	100.0	400.0	248.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	24	11.07	130.0	1480.0	790.0	229	48.92	520.0	14000.0	5665.0
Եղվարդ	7	68.00	135.0	960.0	705.0	64	40.81	380.0	10000.0	3005.0
Հրազդան						20	8.27	250.0	6000.0	780.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						47	49.36	550.0	1200.0	670.0
Ամասիա						1	2.65	80.0	525.0	195.0
Անի						11	10.07	240.0	800.0	280.0
Աշոցք								60.0	210.0	130.0
Արթիկ						9	8.28	140.0	800.0	280.0

Սյունիքի մարզ										
Գորիս						1	2.00	200.0	1600.0	370.0
Կապան								120.0	2000.0	330.0
Մեղրի						3	0.33	400.0	4240.0	835.0
Սիսիան						3	7.25	90.0	1500.0	300.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						13	2.94	260.0	4000.0	1750.0
Վայք						9	3.01	120.0	3400.0	775.0
Տավուշի մարզ										
Բերդ						4	1.03	100.0	2000.0	550.0
Իջևան	1	1.20	504.0	504.0	504.0	1	0.66	530.0	4000.0	1100.0
Նոյեմբերյան						2	0.78	100.0	8340.0	675.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տնադրությունից և հողատեսքերից:

2004թ. առաջին եռամսյակում, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 699 առուվաճառքի գործարքներ, որից 246-ը՝ աճուրդով, 1-ը՝ դատարանի վճռով և 1-ը՝ ուղղակի վաճառքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 քմ մակերեսի հաշվարկով:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի առուվաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	800.0	312.0	312.0	312.0	50	45270.0	250.0	8000.0	2410.0
Ապարան						2	3460.0	250.0	1400.0	325.00
Թալին						10	62180.0	100.0	800.0	130.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	154	174459.0	65.0	2705.0	395.0	42	36797.2	300.0	5000.0	735.0
Մասիս						61	51660.0	300.0	10000.0	870.0
Վեդի						26	26608.0	250.0	2200.0	540.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						17	16200.0	300.0	5000.0	840.0
Բաղրամյան						1	1200.0	180.0	600.0	200.0
Վաղարշապատ	14	7000.0	346.0	364.0	350.0	37	40295.0	300.0	10000.0	1340.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						7	5982.0	300.0	2000.0	550.0
Ճամբարակ								100.0	300.0	140.0
Մարտունի	10	12000.0	66.0	118.0	92.0	8	10000.0	200.0	600.0	240.0
Սևան	6	6800.0	100.0	155.0	130.0			200.0	2000.0	250.0
Վարդենիս								100.0	300.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի						2	1505.0	150.0	600.0	210.0
Գուգարք						1	600.0	150.0	5200.0	700.0
Սպիտակ						3	3840.0	140.0	900.0	165.0
Ստեփանավան						13	16393.0	100.0	600.0	155.0



Տաշիր								100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	6	4569.0	95.0	920.0	248.0	49	47158.0	300.0	8000.0	1550.0
Եղվարդ	25	25000.0	90.0	90.0	90.0	92	112360.0	300.0	8000.0	1756.0
Հրազդան						6	6740.0	300.0	5200.0	1405.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						13	9406.8	250.0	3400.0	350.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի								150.0	400.0	185.0
Աշոցք								90.0	300.0	110.0
Արթիկ						5	2450.0	150.0	900.0	190.0
Սյունիքի մարզ										
Գորիս								150.0	1200.0	380.0
Կապան								150.0	1400.0	410.0
Մեղրի								150.0	900.0	230.0
Սիսիան						1	1200.0	150.0	900.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	30	37500.0	50.0	340.0	75.0	2	2000.0	150.0	2200.0	300.0
Վայք								170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան						3	1810.0	150.0	2200.0	570.0
Նոյեմբերյան								100.0	1400.0	210.0

2004թ. առաջին եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 44 գործարքներ 39.38 հա ընդհանուր մակերեսով, ընդ որում 25-ը՝ Արարատի, 3-ը՝ Արմավիրի, 5-ը՝ Շիրակի, 3-ը՝ Վայոց Ձորի, 6-ը՝ Տավուշի, 1-ը՝ Արագածոտնի մարզերում և 1-ը՝ Երևանում:

2004թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ հանրապետությունում իրականացված 2117 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.8%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 39.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2003թ. առաջին եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 89.2%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 10.9 %-ով:

2004թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 163 բնակարանների, 68 անհատական բնակելի տների, 663 հասարակական, 69 արտադրական նշանակության օբյեկտների, 1145 միավոր հողերի և 9 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2004թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 76 վարձակալության գործարքների քանակները, 2003թ. առաջին եռամսյակի համեմատ, նվազել են 68.1%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 37.2%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. առաջին եռամսյակում հանրապետությունում վարձակալվել են 4472.02 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 39.01 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 4160.88 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 58.97 հա բնակավայրերի, 142.65 հա արդյունաբերական օբյեկտների, 11.15 հա անտառային, 17.00 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 3.35 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր և 39.0 հա ջրային հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ ծավալներ են արձանագրվել Արարատի մարզում՝ 1363.12 հա, որից 1349.34 հա գյուղատնտեսական

նշանակության: 2004թ. առաջին եռամսյակում համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1488.20 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. առաջին եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<b>Մարզի անվանումը</b>	<b>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ.նշ հողերի</b>		<b>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ.նշ հողերի</b>	
	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	1	70.00	129	758.47
Արարատ	10	1100.00	91	249.34
Արմավիր	0	0.00	34	439.04
Գեղարքունիք	16	266.20	95	454.54
Լոռի	0	0.00	42	233.94
Կոտայք	0	0.00	74	161.93
Շիրակ	3	52.00	67	83.51
Սյունիք	0	0.00	41	166.89
Վայոց Ձոր	0	0.00	19	48.41
Տավուշ	0	0.00	17	76.62
<b>Ընդամենը</b>	<b>30</b>	<b>1488.20</b>	<b>609</b>	<b>2672.69</b>

2004թ. առաջին եռամսյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1527 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.1%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. առաջին եռամսյակի համեմատ, աճել է 81.1%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 14.1%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 38.0%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /36.9%/, հողերի /21.9%/, հասարակական նշանակության օբյեկտների /20.4%/, և առանձնատների /15.0%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 665 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 59.5%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 10.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 235.96 հա /այդ թվում 1.07 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 230.20 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ ծավալներ են գրավադրվել Արարատի մարզում՝ 90.20 հա, որից 89.53 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ. առաջին եռամսյակում գրավադրման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում

2004թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 59 և 20 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական

գրանցումներում կազմել է 0.4%: 2003թ. առաջին եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակն նվազել է 7.1%-ով, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 33.1%-ով: 2004թ. առաջին եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 26.6%:

2004թ. առաջին եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. առաջին եռամսյակում, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 3736 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2003թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 2.1 անգամ, իսկ 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 11.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /36.6%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***